



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Եռաբլուր» զինվորական պանթեոնի
գոհված ազատամարտիկների և զինվորների
ծնողական կոմիտեի

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

« 5 » 09 2011 թ. N° 57

Հեռ. 73 99 90, քջջ. 077 46 76 81

Հայաստանի Հանրապետության
Սփյուռքի նախարար
տիկին Հրանուշ Հակոբյանին

Մեծարգո տիկին նախարար

Այս նամակը Ձեզ եմ հասցեագրում հազարավոր որդեկորույս ծնողների հորդորով ու խնդրանքով: Մենք խորապես համոզված ենք, որ սփյուռքահայության նախարարության և անձամբ Ձեր նախաձեռնած <<Արի տուն>> ծրագիրը մոտ 10 միլիոն աշխարհասփյուռ հայության միավորման, համախմբման ամենակարճ ուղին է:

Հայաստանի Հանրապետությունը բոլոր հայերի հայրական տունն է, իսկ հայրական տան նկատմամբ ունեցած ակնաճանճը հաճախ նաև պաշտամունքը հատուկ է մեր ազգի հոգեբանությանն ու խառնվածքին: Թերևս այս իրողությամբ պետք է բացատրել այն արձագանքը, որ առաջացրեց <<Արի տուն>> ծրագիրը՝ աշխարհի բոլոր ծագերում:

Այս հին ու բարի մոլորակի վրա հազիվ թե լինի մի անկյուն, ուր ճակատագրի և հանգամանքների բերումով հողմացրիվ եղած մի հայ չգտնվի: Այնպես որ Ձեր ծրագիրն անվրեպ <<խփել է նպատակակետին>>: Հեռավոր ափերից Հայաստան ժամանած հայրենակարոտ մեր քույրերն ու եղբայրները Բիբլիական Արարատից անմիջապես հայացքներն ուղղում են դեպի

ՀՀ ԱԳՅՑՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՄՏԵՎԼԱՐՈՒԹՅՈՒՆ
Մադր թիվ 2528-11
07 09 2011 թ.

Ծիծեռնակաբերդ և ապա՝ Եռաբլուր: Նրանք անպայման այցելում են արցախյան ազատամարտի փառահեղ հաղթանակը կերտած և դրա համար իրենց կյանքը տված մեր հերոս զավակների շիրիմներին: Այս հանդիպումները նրանց համար դառնում են հայրենասիրության իսկական դասեր: Նման հանդիպումները տարբեր երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությունն ու մշակույթը կրող սփյուռքահայերի սրտերում վերստին և անդառնալիորեն բորբոքում են հայության ոգին: Մեզ համար չափազանց հաճելի է գիտակցել, որ մեր զավակներն անգամ հետմահու նպաստում են Հայաստանի և սփյուռքի կապերի ամրապնդմանը: Ուրեմն, երիցս ճշմարիտ է <<մահ իմացյալ անմահություն է>> բանաձևը:

Ուզում ենք մեր անսահման երախտագիտությունը հայտնել Ձեզ՝ այս չափազանց կարևոր, հայանպաստ ու հայապահապան ծրագրի համար, դրա իրականացման ճանապարհին մաղթել հաջողություններ և հաղթանակներ:

<<Եռաբլուր>> զինվորական պանթեոնի զոհված ազատամարտիկների և զինվորների ծնողների անունից:

Հարգանքով



Արամայիս Միքայելյան